

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

2018 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

ՄԱՍ I

Երևանի քաղաքապետի գեկույցը 2018 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Երևան քաղաքի 2018 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2017 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, ինչպես նաև ընդունելով այն, որ 2018 թվականը, որպես առաջին տարի, հնգամյա ծրագրի մեկնակետն է, Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու հնգամյա ծրագրի տրամաբանությամբ ու սկզբնական ժամանակաշրջանի համար իրագործելի այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Երևան քաղաքի 2018 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը խարսխվելու է կայուն ու համաչափ զարգացման անխախտելի սկզբունքի վրա, որի հետևողական ու նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Երևանի տարածքային համաչափ և կայուն զարգացման ապահովումը
2. Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական ծրագրերի շարունակականության ապահովումը
3. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխմանը միտված ծրագրի գործնական փուլի մեկնարկը
4. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքների գործնական փուլի մեկնարկը

5. Ժամանակակից նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման ծրագրերի իրականացման գործնական փուլի մեկնարկը
6. Վերելակային տնտեսության արդիականացման ծրագրի իրագործելիության ուսումնասիրման և նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ապահովումը
7. Բակային տարածքների բարեկարգման և բնակչության անվտանգ տեղաշարժի ծրագրերի շարունակականության ապահովումը
8. Բնակելի ֆոնդի վերանորոգման և պահպանման, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրերի շարունակականության ապահովումը
9. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիության ապահովում քաղաքային առօրյան ավելի մատչելի դարձնելու մարդասիրական ծրագրերի շարունակական և հետևողական իրագործումը
10. Մայրաքաղաքի բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգության ապահովման ծրագրի շարունակականության ապահովումը
11. Զբոսաշրջության զարգացմանը խթանող քաղաքականության իրականացման շարունակականության ապահովումը
12. Մայրաքաղաքի բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավմանը միտված ծրագրերի շարունակականության ապահովումը
13. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության արդեն իսկ ձևավորված ավանդույթների պահպանումն ու զարգացումը
14. Նպատակային քաղաքականության վարման միջոցով մայրաքաղաքի տնտեսական և քաղաքացիական կյանքին բնակչության անմիջական մասնակցության խթանումն ու նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ և հաղորդակցության ժամանակակից միջոցների կիրառմամբ դրան միտված հնարավորությունների ստեղծումը

15. Կառավարման համակարգի բարեփոխումների և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը, իրավական դաշտի կատարելագործումը
16. մայրաքաղաքի արտաքին ձևավորման և շենքերի արտաքին տեսքի կարգաբերման շարունակական ծրագրերի իրականացման ապահովումը
17. Միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացմանը միտված ծրագրի իրագործելիության ուսումնասիրման աշխատանքների համար նախադրյալների ստեղծումը
18. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը
19. Ներդաշնակ կենսատարածքի ձևավորումը և բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը նպաստումը
20. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը
21. Մշակութային ժառանգության պահպանությունը, առողջ ապրելակերպի խրախուսումը
22. Երեխաների իրավունքների պաշտպանությունը և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը
23. Առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը և բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակական բարելավումը
24. Բնակչության անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովումը
25. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության, հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի շարունակականության ապահովումը
26. Միջազգային համագործակցության ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացումը, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունն ու դրա արդյունավետ կիրառման ապահովումը

ՄԱՍ II

Բացատրագիր-Հիմնավորում Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուտների գծով՝ 80,189,969.8 հազ. դրամ,

ծախսերի գծով՝ 80,237,969.8 հազ. դրամ,

դեֆիցիտը՝ 48,000.0 հազ. դրամ:

1. Եկամուտների կանխատեսում.

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 80,189,969.8 հազ. դրամի չափով՝ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով ի սկզբանե հաստատված 84,344,931.5 հազ. դրամի դիմաց: Ծրագրված եկամուտները գերազանցում են 2016 թվականի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտներին 2,858,861.7 հազ. դրամով կամ 3.7%-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 21,903,379.9 հազ. դրամ՝ 2017 թվականի նախատեսվածից 1,360,209.4 հազ. դրամով ավելի, իսկ 2016 թվականի սեփական եկամուտների փաստացի կատարողականից 2,157,316.9 հազ. դրամով կամ շուրջ 10,93%-ով ավելի:

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները ծրագրվել են 11,434,918.0 հազ. դրամի չափով կամ 2017 թվականի համար հաստատված ցուցանիշից 426,503.0 հազ. դրամով կամ 3.87%-ով ավելի: 2018 թվականին նախատեսված հարկային եկամուտները ավել են 2016 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից 680,459.8 հազ. դրամով կամ 6.33%-ով, որից.

- գույքահարկը նախագծով նախատեսվել է 10,771,094.4 հազ. դրամ կամ 2017 թվականի համար հաստատված ցուցանիշից 426,431.2 հազ. դրամով ավելի, իսկ 2016 թվականի փաստացի ցուցանիշից 649,270.6 հազ. դրամով կամ շուրջ 6.41%-ով ավելի,
- հողի հարկը ծրագրվել է 663,823.6 հազ. դրամ՝ 2017 թվականին ծրագրված ցուցանիշից 71.8 հազ. դրամով ավելի: 2018 թվականին նախատեսված հողի հարկը գերազանցում է 2016 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշը 31,189.2 հազ. դրամով կամ 4.93%-ով:

2018 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են հիմքում ունենալով 2017 թվականի հավաքագրման սպասվող կատարողականը, վարչարարական միջոցառումների հետևողական և արդյունավետ իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերը: Հարկային եկամուտների ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվել նաև առկա ապառքների և 2018 թվականին առաջացող հաշվարկային ցուցանիշները: Հարկային եկամուտների կանխատեսվող աճը պայմանավորված է ընթացիկ տարում ձեռնարկված մեծածավալ վարչարարության արդյունքում 2018 թվականին ակնկալվող մուտքերով, ինչպես նաև գույքային հարկերի հաշվառման շտեմարանի ճշտումների արդյունքում դրանում լրացուցիչ հարկվող օբյեկտների ընդգրկմամբ, թեև այնտեղ դեռևս առկա են փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտացոլված ապառքներ, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով գանձման ենթակա չեն: Այդուհանդերձ, 2018 թվականին ծրագրվել է հարկային եկամուտների գծով իրատեսական և հիմնավորված ապառքներից առավելագույն գանձման ցուցանիշ:

Տեղական տուրքերի գծով 2018 թվականին ծրագրվել են 2,605,150.9 հազ. դրամի մուտքեր 2017 թվականին նախատեսված 3,443,672.5 հազ. դրամի դիմաց կամ 838,521.6 հազ. դրամով պակաս, ինչը պակաս է 2016 թվականի փաստացի ցուցանիշից 484,368.7 հազ. դրամով կամ շուրջ 15.68%-ով: Տեղական տուրքերի ծրագրված ցուցանիշի համեմատական նվազումը պայմանավորված է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխություններով՝ ավտոկայանատեղի և համայնքի արխիվից փաստաթղթերի պետճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տուրքերը սահմանելով որպես տեղական վճար: Նշվածով պայմանավորված տեղական տուրքերի հոդվածով ծրագրված ցուցանիշները տեղափոխվել են տեղական վճարների հոդված:

Տեղական տուրքերի կազմում համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվել է 1,457,431.0 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսված 1,432,906.8 հազ. դրամից 24,254.2 հազ. դրամով ավել, ինչն ավել է նաև 2016 թվականին փաստացի հավաքագրված ցուցանիշից 16.54%-ով: Ընդ որում նախատեսված տուրքի ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 404-Ա որոշմամբ հավանություն տրված համայնք-մասնավոր համագործակցության սկզբունքով վերգետնյա անցումների կառուցման դիմաց նախատեսվող եկամտի գումարը՝ 240,000.0 հազ. դրամի չափով: Տեղական տուրքերի մյուս տեսակների գծով հիմնականում պահպանվել են ընթացիկ տարվա ցուցանիշները՝ հաշվի առնելով 2017 թվականի միտումները:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2018 թվականի համար նախագծով ծրագրվել են 387,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 77,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 310,000.0 հազ. դրամ:

Ցուցանիշների ծրագրման համար հիմք է ընդունվել 2017 թվականի կանխատեսվող կատարողականը, ինչպես նաև այդ տուրքի գանձման ուղղությամբ Երևանի քաղաքապետարանի գործառույթների բացակայությունը:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 21,696,046.3 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ՝ 2017 թվականի ճշտված բյուջեից 76,754.7 հազ. դրամով կամ 0.35%-ով պակաս: Ընդ որում.

- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախատեսվել են 13,430,355.1 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված և 2016 թվականի փաստացի ստացված ցուցանիշների չափով:
- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 8,265,691.2 հազ. դրամ՝ 2017 թվականի ի սկզբանե հաստատվածից 76,591.2 հազ. դրամով պակաս, իսկ ճշտված ցուցանիշից 76,754.7 հազ. դրամով պակաս: (ցանկը կցվում է):

1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2018 թվականի նախագծով ծրագրվել են 44,066,854.6 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 48,124,821.0 հազ. դրամի դիմաց կամ 8.43%-ով պակաս, ինչը նաև ավելացում է 2016 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ 0.51%-ով, որից.

- շահաբաժինների գծով 2018 թվականին ծրագրվել է 79,242.1 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսված ցուցանիշից 44,757.9 հազ. դրամով պակաս: Երևան համայնքի մասնակցությամբ ընկերությունների տրամադրության տակ մնացող շահույթից Երևանի բյուջե շահաբաժինների տեսքով մասհանվելիք գումարների կրճատումը պայմանավորված է համեմատաբար խոշոր շահաբաժին վճարող ընկերություններում իրականացվող ներդրումային ծրագրերով և համախառն շրջանառության ծավալների անկմամբ, ինչպես նաև որոշ

- ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների ծավալի կրճատմամբ: Հաշվարկը կատարվել է հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշմամբ հաստատված կարգի դրույթները,
- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 610,154.7 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսված 596,597.2 հազ. դրամի դիմաց կամ 13,557.5 հազ. դրամով ավել՝ հիմք ընդունելով վարձակալության հաշվառման բազայի ճշգրտումը, ներառյալ ավագանու որոշմամբ սահմանված կարգով և դրույքաչափերով վարձակալության պայմանագրերի վերանայման հնարավորությունները, ինչպես նաև ապառքների գանձման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն ու դատական գործընթացի տևողությունը,
 - համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 100,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 25,000.0 հազ. դրամով ավել, ինչը նույնպես հիմնավորվում է հողի վարձակալության բազայի ճշգրտման սկսած գործընթացով,
 - այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, բացառությամբ հողերի, վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները և ծրագրվել են 362,215.3 հազ. դրամ՝ 2017 թվականի նախատեսված 362,898.1 հազ. դրամի դիմաց, ինչը սակայն 2016 թվականի փաստացի հավաքագրված ցուցանիշից ավել է 115.87%-ով: Նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 404-Ա որոշմամբ հավանություն տրված սկզբունքով թվով 5 վերգետնյա անցումների կառուցման դիմաց նախատեսված վարձավճարի գումարը՝ 160,000.0 հազ. դրամի չափով, ինչը ներառված է նաև ընթացիկ տարվա համապատասխան ցուցանիշում,

- պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև Երևանի կոշտ թափոնների կառավարման, Երևանի քաղաքային լուսավորության քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախագծով 2018 թվականի համար ծրագրվել են 36,590,543.6 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված 42,420,738.0 հազ. դրամի և 2016 թվականի 38,316,576.5 հազ. դրամի դիմաց կամ համապատասխանաբար 5,830,194.4 հազ. դրամով և 1,726,032.9 հազ. դրամով պակաս՝ հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները (ցանկը կցվում է): Հիմնական նվազեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N191-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Երևանի քաղաքապետին որպես «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի լիազոր մարմնի լիազորություններ վերապահելու մասին որոշումը, որի արդյունքում Վերակազմության և զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրամիության կողմից ֆինանսավորվող Երևանի ջրամատակարարման բարելավման ու Ֆրանսիայի հանարպետության կառավարության կողմից ֆինանսավորվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրերը այլևս չեն դիտարկվում որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություն և չեն ներառվում Երևանի բյուջեում:
- տեղական վճարների գծով ծրագրվել է 5,296,142.8 հազ. դրամ՝ 2017 թվականից 3,508,761.6 հազ. դրամի համեմատ, ինչն ավելի է նաև 2016 թվականի փաստացի հավաքագրման ցուցանիշից 2,055,625.6 հազ. դրամով կամ 63.44%-ով: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի

«Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարի դրույքաչափերը սահմանելու մասին» N 347-Ն որոշմամբ սահմանված և 2012 թվականից կիրառվող աղբահանության վճարը, որը ծրագրվել է 3,309,559.9 հազ. դրամի չափով, ինչպես նաև համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 139,701.7 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 4,000.0 հազ. դրամի, իսկ հասցեի տրամադրման համար 105,010.0 հազ. դրամի մուտքեր: Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ տեղական վճար համարվող ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայատեղում կայանելու համար ծրագրվել է 920,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար նախատեսվել է՝ 43,200.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ 737,040.0 հազ. դրամ, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 2,762.3 հազ. դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային սեփականության թանգարանների մուտքի համար՝ 13,868.9 հազ. դրամ, համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ 1,000.0 հազ. դրամ, համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ 20,000.0 հազ. դրամ:

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 240,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականին ծրագրված ցուցանիշի չափով,
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 460,178.4 հազ. դրամ, որից 280,000.0 հազ. դրամը՝ ավտոկայանատեղի վճարի չվճարման սահմանված դեպքերում նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառումից,
- նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերի՝ տրամադրված արտաքին աղբյուրներից եկամտի գծով ծրագրվել է 10,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականին ծրագրված ցուցանիշի չափով,
- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 313,377.7 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեով նախատեսված 225,777.7 հազ. դրամի դիմաց: Ծրագրված եկամուտները ներառել են կառուցապատվող տարածքներում հարկայնության յուրաքանչյուր քառակուսի մետրի համար կառուցապատող կազմակերպությունների կողմից վճարման ենթակա պայմանագրային պարտավորությունները, որոնք հավաքագրմանը զուգահեռ ունեն նվազման միտում, ինչպես նաև ազատ ֆինանսական միջոցների կառավարումից ակնկալվող եկամուտները,
- վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը 2018 թվականին ծրագրվել են 901,662.6 հազ. դրամի չափով՝ բյուջեի եկամտային և ծախսային մասերի հավասարակշռման նպատակով:

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 80,237,969.8 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 99%-ը կամ 80,179,969.8 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 959,662.6 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի և ելքերի գումարը կազմում է 4,000,000.0 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը պակաս է 2017 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 4,174,961.8 հազ. դրամով, ինչը պայմանավորված է պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նվազմամբ, իսկ 2016 թվականի փաստացի ծախսերից ավելի է 1,758,386.1 հազ. դրամով և կազմվել է առանձնացված մուտեցումների հիման վրա:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 38.3%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերին՝ 18.9%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերին՝ 12.6%:

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 6,965,017.5 հազ. դրամի չափով, (վարչական եկամուտների 8.7 %-ը): Վարչական մասի պահուստային ֆոնդից 901,662.6 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել ֆոնդային մաս, 5,684,507.1 հազ. դրամը՝ հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը, որպես պատվիրակված լիազորություն Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրին:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով, քանի որ այն ծախսային մասով ներառելու դեպքում չէր ապահովվի «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պահուստային ֆոնդի համար նախատեսված նվազագույն 5%-անոց շեմը: Նման օրենսդրական շեմն ըստ էության խնդիր է առաջացնում համայնքներից միայն Երևան համայնքում, հաշվի առնելով եկամուտների

կազմում պատվիրակված լիազորությունների իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող միակ բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 8,116,664.3 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 10.1%-ը, ինչը 2017 թվականի հաստատված (ճշտված) համապատասխան ցուցանիշից ավել է 144,830.4 հազ. դրամով: Ծրագրված ցուցանիշի համեմատական ավելացումը հիմնականում պայմանավորված է Երևանի 2800 ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակներում որոշ հոգվածների մասով լրացուցիչ անհրաժեշտ ծախսերով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 5,213,285.9 հազ. դրամ, ինչը 2017 թվականի համապատասխան ցուցանիշից ավել է 1.422.0 հազ. դրամով: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա: Հաստատված հաստիքացուցակով նախատեսված 1998 հաստիքից նշված ծախսային հոգվածին բաժին է ընկնում թվով 1783 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների), որից միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմում է 1769: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2017 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: Նույն սկզբունքով՝ հաշվարկված և նախատեսված հաստիքներում աշխատող անձանց խրախուսման համար,

աշխատավարձի ֆոնդի 14.5%-ի չափով նախատեսվել է պարգևատրման ֆոնդ: Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2017 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N422-Ն որոշման և 2016 թվականի նոյեմբերի 25-ի N333-Ն որոշման պահանջները: Մասնավորապես, այս հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 270,678.5 հազ. դրամ՝ 2017 թվականի 277,144.2 հազ. դրամի դիմաց կամ 6,465.7 հազար դրամով պակաս: Կոմունալ ծառայությունները ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 18,209.8 հազ. դրամի չափով՝ 2017 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 1306.0 հազ. դրամով ավելի: Կապի ծառայությունները ներառում են փոստային և սուրհանդակային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 198,713.5 հազ. դրամ, ինչը պակաս է 2017 թվականի ցուցանիշից 8,952.9 հազ. դրամով: Ապահովագրական ծախսերը նախատեսվել են 5,311.5 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով 2010 թվականի մայիսի 18-ին ընդունված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: Ծրագրված գումարը ավել է 2017 թվականին նախատեսված ցուցանիշից 626.2 հազ. դրամով: Գույքի և սարքավորումների վարձակալությունը ծրագրվել է 76,205.0 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսված ցուցանիշից 15,120.0 հազ. դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի տրամադրումը և այլն: Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը պլանավորվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու

վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, նախորդ տարիների փաստացի, 2018 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները և ծրագրվել է 62,750.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ցուցանիշից 2,000.0 հազ. դրամով պակաս: Այս հոդվածով նախատեսված ծախսերը վերաբերում են Երևանի քաղաքապետարանի՝ ներառյալ Երևան քաղաքի ավագանու անդամների, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի գործուղումներին: Վարչական ծառայությունների գծով նախատեսվել է 3,629.9 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում գրքերի (փաստաթղթերի) կարման ծառայությունների համար՝ 2017 թվականի ճշտված 4,247.9 հազ. դրամի դիմաց: Համակարգչային ծառայությունների գծով ծրագրվել է 45,202.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման համար, ինչն ավելի է 2017 թվականի ճշտված ցուցանիշից 6,860.0 հազ. դրամով: Ավելացումը պայմանավորված է 2018 թվականի ընթացքում Երևան քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության և հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտներում պատշաճ հսկողություն իրականացնելու նպատակով 2017 թվականին ներդրված ծրագրի անխափան և արդյունավետ շահագործման, ինչպես նաև դրա գործնական կատարելագործմանն ուղղված համապատասխան ծառայության ձեռքբերման անհրաժեշտությամբ, որով նախատեսվում է իրականացնել նաև ծառայողական նպատակներով շահագործվող թվով 16 ավտոմեքենաներում տեղադրված GPS սարքերի ընթացիկ սպասարկումը: Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսվել է 9,262.0 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացն ապահովելու նպատակով, 2017 թվականի նույն ցուցանիշից 3,168.0 հազ. դրամով պակաս: 2018 թվականին վերապատրաստում են անցնելու թվով 421 համայնքային ծառայող: Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 40,356.4 հազ. դրամի չափով՝ 2017 թվականին

հաստատված ցուցանիշից 6,831.5 հազ. դրամով պակաս՝ պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման համար: Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 10,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով և ներառում են աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար: Ներկայացուցչական ծախսերի գծով ծրագրվել է 180,163.9 հազ. դրամ, ինչն ավելի է 2017 թվականի ճշտված ցուցանիշից 55,082.0 հազ. դրամով, ինչը պայմանավորված է Երևանի 2800 ամյակի հոբելյանական միջոցառումների նախապատրաստական աշխատանքներով: Գումարը նախատեսվել է պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների և արարողակարգային բնույթի միջոցառումների հետ կապված ծախսերի, ինչպես նաև աշխատակազմերում առօրյա ներկայացուցչական ծախսերն իրականացնելու համար: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները ծրագրվել են 109,533.8 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, գույքի վերագնահատման, ակտիվների շրջանառման, վերահսկման և կառավարման ծրագրային ապահովման, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցության ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները: Մասնագիտական ծառայությունների գծով նախատեսվել է 10,451.1 հազ. դրամի չափով ծախս՝ հիմնականում փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության համար և ծրագրվել է 2017 թվականի ճշտված բյուջեից 223.2 հազ. դրամով ավելի: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 277,911.6 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 8,314.0 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների

ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել են 2017 թվականի գնման գործընթացի արդյունքում ձևավորված գները և քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված և փաստացի շահագործվող գույքի քանակական ցուցանիշները: Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով ծախսերը ծրագրվել են 73,155.7 հազ. դրամ, ինչը պակաս է 2017 թվականի հաստատված բյուջեից 2,836.2 հազ. դրամով, և հաշվարկվել են հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: Տրանսպորտային նյութերը ծրագրվել են 214,658.5 հազ. դրամի չափով 2017 թվականի ցուցանիշից 200.0 հազ. դրամով ավելի և հաշվարկվել են վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով ծրագրվել է 22,608.4 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 331.1 հազ. դրամով ավելի: Հատուկ նպատակային այլ նյութերի գծով ծրագրվել է 8,000.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից 150.0 հազ. դրամով ավելի, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերում: Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին հոդվածով ծրագրվել է 279,718.5 հազ. դրամ, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և 2-րդ վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը և ընթացիկ այլ աշխատանքները: Այլ նպաստներ բյուջեից հոդվածով նախատեսվել է 43,100.0 հազ. դրամ, որից 200.0 հազ. դրամը հատկացվում է որպես խեղման նպաստ, իսկ 42,900.0 հազ. դրամը՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին, և ծրագրվել է 2017 թվականին նախատեսված ցուցանիշի չափով: Պարտադիր վճարների գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 3,095.3 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեից 32.0 հազ. դրամով պակաս: Այլ ծախսեր հոդվածով ծրագրվել է 26,500.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 5000.0 հազ. դրամով ավելի՝ 2018 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ

կապված այլ չկանխատեսված ծախսերի կամ դրանց փոփոխությունների համար: Տրանսպորտային սարքավորումների գծով՝ վթարված, հին և մեծ ծառայողական ծախսեր պահանջող ավտոմեքենաների փոխարինման նպատակով թվով 2 ավտոմեքենայի ձեռք բերման համար, նախատեսվում է 20,000.0 հազ. դրամ: Վարչական սարքավորումների գծով ծրագրվել է 48,195.2 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսված 49,442.6 հազ. դրամի դիմաց կամ 1,247.4 հազ. դրամով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրել միայն խիստ անհրաժեշտ գույք և տեխնիկա՝ ապահովելով առավելագույն խնայողություն: Այլ մեքենաներ և սարքավորումների գծով նախատեսվել է 78,934.4 հազ. դրամ, որը նախատեսվել է Արգիշտի 1 հասցեում գտնվող վարչական շենքի վթարային վերելակը նորով փոխարինելու, ինչպես նաև շահագործման ժամկետը սպառած հովացման համակարգի (չիլերի) ձեռքբերման և տեղադրման համար: Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով նախատեսվել է 8,495.0 հազ. դրամ հակավիրուսային համակարգի, սերվերային հանգույցներում վիրուսների տարածման կանխարգելիչ համակարգի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կայքերի անվտանգության սերտիֆիկատի ձեռքբերման համար:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 3,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեով ծրագրված 13,000.0 հազ. դրամի դիմաց կամ 10,000.0 հազ. դրամով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվում են ընթացիկ նորոգման աշխատանքներ Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքում:

3. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր ծրագրով նախագծով ծրագրվել է 14,000.0 հազ. դրամ: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանը վարկանիշ շնորհելու ծառայությունների ձեռքբերման համար պայմանագիր կնքեց Fitch միջազգային վարկանշային գործակալության հետ, որը ենթադրում է վարկանիշի վերանայում տարվա մեջ 2 անգամ: Հաշվի առնելով, որ ծրագիրը շարունակական է, 2018 թվականին ծրագրված գումարն ուղղվելու է նույն պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելուն:

4. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով ծրագրվել է 92,843.1 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները:

5. **Նախագծային աշխատանքներ** ծրագրով նախատեսվել է 137,750.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 126,750.0 հազ. դրամի դիմաց կամ 11,000.0 հազ. դրամով ավելի՝ 2019 թվականի բյուջեն ծրագրելիս կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

6. **Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեով սահմանված 18,000.0 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև Երևան քաղաքի 2005-2020 թթ. գլխավոր հատակագծի ճշգրտման և լրամշակման աշխատանքներ:

7. **Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում** ծրագրով նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ՝ Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքներն իրականացնելու համար:

8. **Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ** ծրագրով նախատեսվել է 54,300.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 5,560.0 հազ. դրամով ավելի է 2017 թվականի ճշտված ցուցանիշից:

9. **Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ** ծրագրով նախատեսվել է 86,322.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի 87,372.0 հազ. դրամի դիմաց, ինչը ներառում է ինչպես Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, այնպես էլ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

10. Քաղաքացիական պաշտպանության աջակցություն և Զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն ծրագրերով նախատեսվել են համապատասխանաբար 16,000.0 հազ. դրամ և 17,500.0 հազ. դրամ, ինչը պայմանավորված է գործող օրենսդրությամբ նախատեսված նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելով՝ 2017 թվականի ճշտված բյուջեի չափով:

11. Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում ծրագրով նախատեսվել է 12,660.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը:

12. Ռոռզման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 74,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի վարչական շրջաններում առկա սիզամարգերում ռոռզման ապահովման համար՝ հիմք ընդունելով սահմանված կարգով կազմված նախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև Նորք-Մարաշ վարչական շրջանում Արմենակյան փողոցում ռոռզման ցանցի հատվածի կապիտալ վերանորոգման համար:

13. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ու ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրերով նախատեսվել է 3,731,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի 3,706,000.0 հազ. դրամի դիմաց կամ 25,000.0 հազ. դրամով ավելի: Նախատեսված գումարից 3,284,000.0 հազ. դրամը նախատեսված է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով որպես նպատակային հատկացում (սուբվենցիա): Նշված ընդհանուր գումարի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 750 հազ. քմ ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև շուրջ 5000 քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

14. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար, ինչն ավել է 2017 թվականի ճշտված ցուցանիշից 11,780.0 հազ. դրամով:

15. Հենապատերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեից 2,000.0 հազ. դրամով պակաս: Հենապատերի ընտրությունը կատարվում է ըստ նրանց վթարայնության և վերանորոգման հրատապության աստիճանի:

16. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 410,000.0 հազ. դրամ, որից 5,000.0 հազ. դրամը՝ Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի հրապարակում հետիոտն անցումների աստիճանավանդակների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար, իսկ 405,000.0 հազ. դրամը՝ թվով 5 վերգետնյա անցումների կառուցման համար: Ընդ որում թվով 5 վերգետնյա անցումների կառուցման ծրագիրը նախատեսվել է Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N 404-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրով և հաշվարկվել է շինարարության արժեքը՝ 400,000.0 հազ. դրամ, որի վճարման դիմաց նախատեսվել են 260,000.0 հազ. դրամ՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության տուրքի և 140,000.0 հազ. դրամ՝ գովազդային տարածքի վարձավճարի գծով եկամուտներ: Մուտքերի և ելքերի հստակ արժեքները կձևավորվեն գնման մրցութային գործընթացի արդյունքում: Անցումների կառուցման տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 5,000.0 հազ. դրամի չափով նախատեսվել է Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին: Ծրագրով նախատեսված ցուցանիշը պակաս է 2017 թվականի հաստատված բյուջեից 2,000.0 հազ. դրամով:

17. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշի չափով և ուղղվելու է Երևան քաղաքի կամուրջների, վերգետնյա անցումների և ուղեանցների սպասարկման աշխատանքների իրականացմանը:

18. Հրազդանի կիրճի բարեկարգում ծրագրով նախատեսվել է 2,000.0 հազ. դրամ՝ ընթացիկ տարվա համապատասխան ցուցանիշի չափով՝ Արաբկիր վարչական շրջանի մասով ընթացիկ բարեկարգման և մաքրման աշխատանքների համար:

19. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշի չափով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մայրերի սալիկապատման աշխատանքներ

20. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով նախատեսվել է 83,500.0 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեից 23,500.0 հազ. դրամով ավելի, որից 20,000.0 հազ. դրամը՝ քաղաքի տարբեր հատվածներում մետաղական ցանկապատերի վերանորոգման և ներկման, իսկ 63,500.0 հազ. դրամը՝ Երևանի հիմնանորոգված փողոցների վթարված հատվածների վերականգնման, փողոցների միջնապատերի և այլ

հատվածների ընթացիկ բարեկարգման աշխատանքներն համայնքային իրականացնելու համար:

21. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով նախատեսվել է 444,000.0 հազ. դրամ, որն իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 100% բաժնեմասը որպես նվիրատվություն ձեռք բերած Երևան համայնքի կողմից ծառայությունների մատուցման համար կնքված «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի հետ Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման համար՝ ամսական 30.0 մլն դրամ հաստատուն գնով (ներառյալ ԱԱՀ) կամ տարեկան 360.0 մլն դրամով, և «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման համար՝ ամսական 7.0 մլն դրամ գումարով (ներառյալ ԱԱՀ), կամ տարեկան 84.0 մլն դրամով, երկու նոր պայմանագրերով նախատեսված ծառայությունների մատուցման տարեկան ծախսերի հանրագումարը:

22. Թեքահարթակների կառուցում և ավտոբուսներում թեքահարթակների ապահովում ծրագրերով՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ, որից 30,000.0 հազ. դրամ՝ փողոցներում և մայթերում նախկինում կառուցված թեքահարթակների վերանորոգման, ինչպես նաև շուրջ 120 նոր թեքահարթակների և դրանց կից տեսողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժի հարմարավետությունն ապահովելու նպատակով մայթերի ավարտի մասին զգուշացնող հատուկ գոգավորությամբ սալահատակների կառուցման համար, իսկ 20,000.0 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության կազմակերպության ավտոբուսներում թեքահարթակների կամ հատուկ վերելակային հարմարանքների ձեռք բերման և տեղադրման համար:

23. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով նախատեսվել է 306,350.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նորաճ նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, ծառաբների մետաղական ծածկույթներ, հայտարարությունների ցուցատախտակներ, տեղադրել քաղաքային նոր

ինստալյացիաներ, այգիներում ավելացնել նստարանների քանակը, բակերում տեղադրել զրուցարաններ, ինչպես նաև վերանորոգել նախորդ տարիներին տեղադրված նստարաններն ու աղբամանները: Հասարակական տրանսպորտի կանգառներում կանգառասրահների ձեռքբերման և տեղադրման համար նախատեսվում է 25,000.0 հազ. դրամ:

24. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ: Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհի կառուցման ծրագրի իրականացման նպատակով Երևան քաղաքի վարչական սահմաններում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գտնվող օտարվող սեփականության (հողի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար՝ որպես ներդրումային ծրագրի համաֆինանսավորում:

25. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված է 2,994,279.9 հազ. դրամ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է մեկնարկել Արշակունյաց-Բագրատունյաց ճանապարհահատված (Բանվորի արձան) և Արշակունյաց-Գարեգին Նժդեհ ճանապարհահատված (Հայրենիք) ճանապարհահատվածների շինարարական աշխատանքները և ապահովել այդ մասով վճարումները, ինչպես նաև նույն տրանշի շրջանակներում իրականացնել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համար նախատեսվող միասնական տոմսային համակարգի և ավտոբուսի ժամանման ցուցադրման որոշ սարքավորումների ձեռքբերումների համար նախատեսվող կանխավճարների տրամադրումը:

26. Վերելակների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 108,770.1 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեից 5,246.8 հազ. դրամով ավելի՝ բազմաբնակարան շենքերի վերելակների համար սարքավորումների ձեռք բերման և տեղադրման նպատակով:

27. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 2,724,280.6 հազ.

դրամ՝ մետրոպոլիտենի սուբսիդավորման նպատակով՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը:

28. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն ծրագրով նախատեսվել է 602,201.9 հազ. դրամ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին, որի ծրագրման հիմքում ընկած է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա):

29. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել են ընդհանուր 3,410,192.1 հազ. դրամի ծրագրեր որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագրերը (ցանկը կցվում է):

30. Ջրոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսվել է 55,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 30,000.0 հազ. դրամով ավելի՝ Երևան քաղաքի (այդ թվում՝ տեսարժան վայրերի) վերաբերյալ տեղեկատվական բուկլետների տպագրման և տարածման, Երևանը զրոսաշրջիկների համար ճանաչելի դարձնելուն ուղղված միջոցառումների, ինչպես նաև Երևանի 2800-ամյակին ընդառաջ մարքեթինգային քաղաքականության իրականացման համար:

31. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 45,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը, սպասարկումը և նախատեսվել է 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

32. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 23,591.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով, ինչը ծրագրավորվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1

հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների համար, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանության համար:

33. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում

ծրագրով նախատեսվել է 172,613.4 հազ. դրամ՝ քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար և ծրագրվել է 2017 թվականի հաստատված ցուցանիշից 37,956.6 հազ. դրամով ավելի, ինչը հիմնականում պայմանավորված է ընկերությունում տեղեկատվական տեխնոլոգիայի որակյալ մասնագետների աշխատանքի խթանման և տվյալ մասնագետների դեպի այլ կազմակերպություններ հոսունությունը հնարավորինս չեզոքացնելու խնդրով:

34. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով նախատեսվել է 220,000.0 հազ. դրամ, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:

35. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են մուտքեր 4,000,000.0 հազ. դրամ, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 600,000.0 հազ. դրամի չափով, որից 400,000.0 հազ. դրամը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների օտարումից և 200,000.0 հազ. դրամը՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված և շահագործման համար ոչ պիտանի կաթսայատների և այլ գույքի օտարումից,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 3,400,000.0 հազ. դրամի չափով, որից 2,800,000.0 հազ. դրամը՝ հողերի աճուրդով և ուղղակի վաճառքով օտարումներից, իսկ 600,000.0 հազ. դրամը՝ օրինականացված ինքնակամ կառույցների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողերի օտարումից: Հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, ընթացիկ տարվա օտարման միտումները և գործընթացի ողջամիտ ակտիվացման հնարավորությունները:

36. Տոնական ձևավորում ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ տոնական օրերին Երևան քաղաքը պատշաճ ձևավորելու, այդ թվում՝ տոնական լույսեր և սարքավորումներ ձեռք բերելու, ինչպես նաև Էրեբունի-Երևանի 2800 ամյակին նվիրված ինստալացիոն աշխատանքների իրականացման համար և ծրագրվել է 2017 թվականի հաստատված ցուցանիշից 10,000.0 հազ. դրամով ավելի:

37. Հասցեավորման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 105,010.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերելու նպատակով և հաշվարկվել է 2017 թվականի կանխատեսվող կատարողականից ելնելով:

38. Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրով նախատեսվում է 128,200.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեից 10,000.0 հազ. դրամով ավելի, որից 8,200.0 հազ. դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, իսկ 120,000.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

39. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 347,366.9 հազ. դրամ, որից 17,010.0 հազ. դրամը՝ աղբահանության վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրության համար, 228,508.3 հազ. դրամը՝ աղբահանության վճարների գանձումը օպերատորների միջոցով իրականացնելու համար, և 101,848.6 հազ. դրամը՝ նույն ծառայության դիմաց (ներառյալ՝ համատիրություններին) վճարման համար: Ծառայությունների դիմաց վճարումը նախատեսվել է փաստացի գանձվող աղբահանության վճարի 10%-ի չափով:

40. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում ծրագրով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ՝ թվով 37 ավտոբուսներում ուղևորների և կույր հաշմանդամների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման, կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորման համար:

41. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրով նախատեսվել է 5,214,212.2 հազ. դրամ, որից՝ 5,194,212.2 հազ. դրամը Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ ձեռք բերելու համար, իսկ 20,000.0 հազ. դրամը ծրագրված է աղբամանների համար գրպանիկների կառուցման նպատակով:

42. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 352,136.5 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան ընտրված օպերատորի միջոցով սպասարկել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի աղբամուղերը (խցանման մաքրում, ախտահանում), իրականացնել աղբամուղերի աղբընդունիչների վերանորոգումը, ինչպես նաև ապահովել վարչական շրջաններում հավաքված (լքված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը:

43. Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 2,330,516.6 հազ. դրամ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է 2018 թվականին սկսել Երևան քաղաքում նոր աղբավայրի կառուցման և գործող աղբավայրի մեկուսացման գործնական աշխատանքների մեկնարկը:

44. Գետերի հունների մաքրում ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ՝ ըստ վարչական շրջաններով անցնող հատվածների՝ համապատասխան հաշվարկներով, 2017 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

45. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,669,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսված ցուցանիշից 8,500.0 հազ. դրամով ավելի, որից 1,609,000.0 հազ. դրամը ներառում է կանաչ տարածքների պահպանման ծառայությունները, նյութերը և ոռոգման ջրի արժեքը, ծառերի էտման ծառայությունը, 20,000.0 հազ. դրամը՝ տնկիների ձեռքբերումը, 40,000.0 հազ. դրամը՝ քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերը:

46. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 38,075.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար և ծրագրվել է 2017 թվականի ճշտված ցուցանիշից 2,596.0 հազ. դրամով պակաս:

47. Հասարակական գուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 2,420.0 հազ. դրամ՝ պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար:

48. Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում ծրագրով նախատեսվել է 311,500.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեի չափով, ինչի շրջանակներում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի փողոցների, հրապարակների և քաղաքի մուտքերի շրջակայքը: Ընդ որում՝ նշված գումարի շրջանակներում ավելի արդյունավետ կազմակերպելու արդյունքում նախատեսվում է ձեռք բերել ծաղկասածիլներ, սիզամարգերի ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ բուսահող և կարմիր ավազ, ինչպես նաև ապահովել տեղական մշտադալար տնկիների և սածիլների ձեռքբերումը՝ դրանով իսկ էապես ավելացնելով Երևան քաղաքի սիզամարգերի ծաղկապատ և կանաչապատ մակերեսները: Որոշ նյութերի ձեռքբերմամբ և օգտագործմամբ նախատեսվում է նաև սիզամարգերի գեղարվեստական ձևավորում:

49. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով նախատեսվել է 114,602.2 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեից 397.8 հազ. դրամով պակաս՝ Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասազերծման խնդիրը կանոնակարգելու համար:

50. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ, որից 15,000.0 հազ. դրամը այն ինքնակամ կառույցների քանդման համար, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների հաշվին, իսկ 5,000.0 հազ. դրամը՝ Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների իրականացման նպատակով:

51. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում ծրագրով 2018 թվականին նախատեսվում է 450,000.0 հազ. դրամ, որով չորրորդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգության

ապահովման ծրագրի շարունակականության ապահովման շրջանակներում ծրագրվում է քանդված նախկին վթարային շենքի տարածքում սկսել նոր բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքները, որի ամբողջական ավարտը նախատեսվում է 2020 թվականի գարնանը:

52. Շենքերի գեղարվեստական լուսավորում ծրագրով նախատեսվել է 9,000.0 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի հրապարակի և Բագրատունյաց փողոցի շենքերի նեոնային լուսավորությունը վերականգնելու և պահպանելու նպատակով:

53. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 2,229,951.6 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագիրը նախատեսված է ՀՀ 2018 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացման (սուբվենցիայի) հաշվին:

54. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի միջոցներով ֆինանսավորվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 2,299,050.2 հազ. դրամ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է 2018 թվականին սկսել Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագրի գործնական փուլը:

55. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի չափով, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի վթարայնության աստիճանի հետազոտումը և ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

56. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 395,163.6 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեի 361,025.7 հազ. դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում տանիքների նորոգման և

պահպանման աշխատանքները կազմակերպվելու են տարբեր մոտեցումներով (աշխատանքների պատվեր, նյութերի տրամադրում համատիրություններին և այլն):

57. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,266,216.7 հազ. դրամ՝ վարչական շրջանների կողմից ընտրված բակերի բարեկարգման, ինչպես նաև վարչական շրջաններում թվով 6 մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման համար:

58. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով նախատեսվել է ընդհանուր 920,172.4 հազ. դրամ, որից 20,000.0 հազ. դրամը նախատեսվում է շենքերի ֆասադների ընթացիկ նորոգման և մաքրման համար, 5,000.0 հազ. դրամը՝ շենքից թափվող սալերից պաշտպանիչ միջոցառումների համար, իսկ 895,172.4 հազ. դրամը՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի ամբողջական վերանորոգման, ջրթափ խողովակների փոխարինման և այլ աշխատանքների համար: Ծրագրված ցուցանիշը ավելի է 2017 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 318,522.6 հազ. դրամով:

59. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 325,500.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար՝ 2017 թվականի ցուցանիշից 38,500.0 հազ. դրամով պակաս: Ծախսերի նվազեցման չափը համարժեք է 2017 թվականի Հանրապետության հրապարակի շատրվանների հիմնանորոգման վրա ծախսված գումարին:

60. Կաթսայատների պահպանում ծրագրով նախատեսվել է 24,751.6 հազ. դրամ, 2017 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 2,030.0 հազ. դրամով պակաս և ներառում է Երևան քաղաքի սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

61. Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 5,000.0 հազ. դրամով ավելի, ինչը ներառում է շենքերի դեկորատիվ գունազարդումը, քաղաքի վնասված կամարանցումների վերանորոգումը, քաղաքային մետաղյա հենասյունների վերանորոգումը և հատուկ նյութով երեսապատումը:

62. Վթարային պատշգամբների նորոգում ծրագրով նախատեսվել է 53,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված ցուցանիշի չափով, և ծրագրվել է նորոգել շուրջ 190 վթարային պատշգամբ:

63. Կոյուղագծերի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 4,000.0 հազ. դրամ, 2017 թվականի ճշտված ցուցանիշի չափով, Երևան քաղաքի որոշ շենքերի ներքին վթարային կոյուղագծերի և հեղեղատարների հիմնանորոգման համար:

64. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում ծրագրով նախատեսվել է համայնքային կազմակերպություններին հատկացնել 70,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեով նախատեսված 78,000.0 հազ. դրամի դիմաց՝ առաջնային օղակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների ձեռք բերման համար:

65. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ՝ շուրջ 15 պոլիկլինիկաների տանիքները վերանորոգելու նպատակով:

66. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով նախատեսվել է 18,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 6,000.0 հազ. դրամով ավելի, որի շրջանակներում նախատեսվել է սոցիալապես անապահով քաղաքացիներին կոմպյուտերային տոմոգրաֆիայի, ինչպես նաև սքրինինգային հետազոտության ծառայությունների տրամադրման համար:

67. Աջակցություն առողջապահական կազմակերպություններին ծրագրով նախատեսվել է 400.0 հազ. դրամ՝ «Սնուցում և քաղցկեղ» գրքույկի տպագրության և առողջապահական կազմակերպությունների միջոցով բնակչությանը տեղեկատվության տրամադրման համար:

68. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 138,819.7 հազ. դրամ՝ 2017 թվականի համեմատ 29,250.0 հազ. դրամով ավելի՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված, 2018 թվականին սպասվող միջոցառումների քանակը՝ ներառյալ նաև Համահայկական ձմեռային խաղերը:

69. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով նախատեսվել է 590,800.0 հազ. դրամ, որից՝ 40,000.0 հազ. դրամը՝ Սիրահարների զբոսայգու պահպանման, 425,300.0 հազ. դրամը՝ Ծարավ Աղբյուրի և

Պանթեոնին հարակից զբոսայգիների վերականգնման, 80,000.0 հազ. դրամը՝ Էրեբունի վարչական շրջանում զբոսայգու հիմնանորոգման, 40,000.0 հազ. դրամը Նոր Նորք վարչական շրջան հանգստի գոտու կառուցման համար:

70. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեից 2,000.0 հազ. դրամով պակաս՝ հեծանվահրապարակի վերանորոգման և գործունեության ապահովման համար:

71. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 453,290.6 հազ. դրամ՝ Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

72. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով նախատեսվել է 266,213.1 հազ. դրամ, որից Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2018 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների մասով 243,302.4 հազ. դրամ, իսկ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ կետով համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար վճարները որպես տեղական վճարների տեսակ սահմանելու հանգամանքով պայմանավորված թվով 3 թանգարաններին մուտքի վճարների փոխհատուցման համար՝ 13,868.9 հազ. դրամ: «Ֆ. Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի պահպանման համար նախատեսվել է 9041.8 հազ. դրամ:

73. Թանգարանների նորոգում ծրագրով նախատեսվում է 17,250.0 հազ. դրամ՝ Էրեբունի հնավայրի պահպանման, պատմամշակութային բաղադրիչի արժևորման, զբոսաշրջության խթանման և այդ համատեքստում մատուցվող ծառայությունների ընդլայնման նպատակով շինարարական աշխատանքների իրականացման համար:

74. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 380,384.5 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով:

75. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 1,057,755.7 հազ. դրամ՝ 2017 թվականի բյուջեից 317,650.0 հազ. դրամով ավելի, ինչը ներառում է Երևանի 2800 ամյակի հորեյլանական միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև տարվա ընթացքում Երևանի քաղաքապետարանի և վարչական

շրջանների կողմից Երևան քաղաքում իրականացվող բոլոր միջոցառումները, որոնք հաշվարկվել են համանման միջոցառումների կազմակերպման ծախսերից ելնելով:

76. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 252,007.7 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

77. Կենդանաբանական այգու հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեից 605,015.5 հազ. դրամով պակաս: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել Կենդանաբանական այգու զարգացման, վերանորոգման և արդիականացման աշխատանքները:

78. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 112,586.1 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի 111,651.3 հազ. դրամի դիմաց՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա», «Մարաթուկ» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ների և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ-ի սուբսիդավորման համար:

79. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 363,250.1 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

80. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 14,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշի չափով՝ հուշարձանների վնասման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

81. Քաղաքապետարանի աշխատանքների լուսաբանում ծրագրով նախատեսվել է 56,000.0 հազ. դրամ, որն ուղղվելու է մայրաքաղաքային առօրյա կյանքի, բնակչությանը հուզող խնդիրների, դրանց լուծման ուղիների, քաղաքի ապագային միտված նախաձեռնությունների և զարգացման նպատակային ծրագրերի հեռուստատեսային լուսաբանմանը:

82. Անդամակցության վճարներ ծրագրով նախատեսվել է 31,325.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի,

Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի, Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության, Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի, Հայաստանի համայնքների միության և Հայաստանի ավագանիների ասոցիացիայի անդամակցության վճարները վճարելու համար:

83. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 7,797,426.8 հազ. դրամ 2017 թվականի հաստատված բյուջեի 7,714,614.8 հազ. դրամի դիմաց կամ 82,812.0 հազ. դրամով ավելի: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 2017 թվականի չափով՝ 22.5 հազ. դրամ, ինչպես նաև յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար ամսական 650,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով 2017 թվականին երեխաների փաստացի միջին թիվը՝ որոշակի աճի հնարավորությամբ:

84. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված բյուջեից 40,000.0 հազ. դրամով պակաս, ինչի շրջանակներում նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների համար ձեռք բերել մանկական կահույք՝ մահճակալ, պահարան, սեղան, աթոռ և կենցաղային էեկտրական սարքավորումներ՝ գազօջախ, սառնարան, մսաղաց և այլն: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

85. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 8,634.6 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների հիման վրա:

86. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն և երեկոյան ուսուցում ծրագրերով նախատեսվել է 15,953,414.9 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

87. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 3,266,783.7 հազ. դրամ, ինչը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության

երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտդպրոցների պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին՝ 62,595.8 հազ. դրամի չափով: Ծրագրով նախատեսված գումարի էական աճը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով արտադպրոցական դաստիարակության հաստատությունների՝ տվյալ պարագայում երաժշտական և արվեստի դպրոցների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների կողմից կատարված վճարները՝ որպես տեղական վճար սահմանելու հանգամանքով:

88. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 58,900 հազ. դրամ՝ Էրեբունի վարչական շրջանի «Թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգման նպատակով:

89. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 7,547.8 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

90. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսվել է 142,358.7 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

91. Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ 2017 թվականին նախատեսվածից 10,000.0 հազ. դրամով ավել, որից՝ 50,000.0 հազ. դրամը Երևանի ենթակայության երաժշտական դպրոցների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռք բերման համար, 50,000.0 հազ. դրամը՝ շախմատի դպրոցների համար գույքի և մարզական կազմակերպությունների համար մարզագույքի ձեռք բերման համար:

92. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 1,102,000.3 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 550,000.0 հազ. դրամով ավելի: Նախատեսվում է

վարչական շրջաններում իրականացնել թվով 39 նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում, իսկ 2,000.3 հազ. դրամի շրջանակներում մանկապարտեզների ընթացիկ նորոգում: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական լուծումը:

93. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 27,200.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված ցուցանիշից 6,000.0 հազ. դրամով ավելի, որի շրջանակներում նախատեսվում են մարզական խաղերի կազմակերպում, մանկավարժների խրախուսման միջոցառումների անցկացում, «Ազգային Ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հոբբյանական միջոցառումներ, այցելություններ քույր քաղաքներ և համագործակցություն ներառական կրթություն իրականացնող դպրոցներին աջակցող թիմերի հետ:

94. Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 818.1 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

95. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 28,243.0 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

96. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 6,427.0 հազ. դրամ՝ 2017 թվականի ճշտված ցուցանիշից 80.0 հազ. դրամով պակաս և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

97. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 31,603.5 հազ. դրամ՝ 2017 թվականի 30,973.5 հազ. դրամի դիմաց և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

98. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն, և հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրերով նախատեսվել է

659,387.5 հազ. դրամ՝ 2017 թվականի հաստատված ցուցանիշից 9,277.5 հազ. դրամով ավելի և հաշվարկված է հստակ ծրագրային մոտեցումներից, բնակչության առանձնացված խմբերի աջակցության միջոցառումներից ելնելով:

99. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 363,719.6 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

100. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվում է 692,496.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

101. Առողջության ապահովագրություն ծրագրով նախատեսվել է 419,224.0 հազ. դրամ, 2017 թվականի ցուցանիշից 269,340.5 հազ. դրամով ավելի: Ծրագրի համար նախատեսված գումարի ավելացումը պայմանավորված է առողջության ապահովագրություն ստացող անձանց ցանկում շախմատի դպրոցների և մանկապարտեզների աշխատակիցների ընդգրկմամբ: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի վարորդների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, ինչպես նաև Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների համար: Առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափը (գումարը), յուրաքանչյուր աշխատակցի համար նախատեսվում է 52.0 հազ. դրամ, ինչը ապահովագրություն ստացող անձի պարագայում տարվա կտրվածքով նախատեսում է մինչև 4 000 000 դրամի առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն: Առողջության ապահովագրության փաթեթի մեջ մտնող ծառայությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշման N 2 հավելվածի N 1.1 ձևում սահմանված և հաստատված առողջության ապահովագրության բազային փաթեթի չափորոշիչներին:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 48,000.0 հազ. դրամի չափով պակասուրդ: Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 400,000.0 հազ. դրամի չափով, որից 340,000.0 հազ. դրամը կուղղվի ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա Երևան համանքի կողմից 100% բաժնեմասը որպես նվիրատվություն ձեռք բերած «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով ակտիվների ձեռք բերման համար ՓԲԸ-ի վերցված փոխառությունները համաձայն ժամանակացույցի մարելու պարտավորությունների կատարմանը: Տարեսկզբի ազատ մնացորդից 12,000.0 հազ. դրամն ուղղվելու է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2017 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Այսպիսով, Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *Եկամուտների գծով՝ **80,189,969.8** հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝ **80,237,969.8** հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ 48,000.0 հազ. դրամ:*

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ